ՐԱՖՖԻ

Մշակ

(Նվեր Խրիմյան Հայրիկին)

Օ՛ր գարնանային, օ՛ր թարմ և սիրուն,
Շնչում է արփին նոր կյանք, ջերմություն.
Բայց դեռ դաշտերը ձմեռվա քնով
Թմրած նիրհում են, զարթնել չեն ուզում:
Եվ լի հույսերով մշակը ժրաջան
Նիհար եզներով վարում է գութան:
Զարթե՛ք խոր քնից, ո՛վ թմրած արտեր,
Մինչև ե՞րբ պիտ՝ ննջեք, ամայի դաշտեր:

Հաջողություն քեզ, ո՛վ անբախտ մշակ,
Մշակ՝ անպտուղ, խոպան դաշտերի,
Բարեմաղթում է մշակը մտքերի,
Որ կարեկից է քո դառն վշտերի:
Քո տխրության մեջ՝ խնամքով թաքցրած,
Քո ճակատագրի մեջ դարերով ծանրացած,
Կարդում է և նա յուր դառն վիճակը,
Մտքեր սերմանող անբախտ մշակը:
Նա ևս քեզ պես կորդ անապատում
Յուր ամբողջ կյանքը մաշում է, աշխատում,
Անապատումը համառ սրտերի
Եվ անպտղաբեր մարդկանց մտքերի:

Եվ նրա ազնիվ ճգնաց փոխարեն
Տգետը փշյա պսակ է հյուսում.
Իսկ նա լի հույսերով յուր սերմն է ցանում
Եվ ապագայում հունձքի է սպասում: